

սրբոցն: 29 Եւ նոցա ուրախալից սրտիւք զուարճացեալք երկիր պագանէին տեառն Աստուծոյ. եւ ձեռն ի գործ արկեալ՝ ժողովեցին զհւրաքանչիւր ոք յականէ ի մի մի սապատ, որպէս նշմարեալ երեւիր¹ իբրեւ գրով երանելի հուժկին. յորոց բուրեալ հոտ անոյշ ի մարմնոց սրբոցն՝ լցեալ զուարթացուցաներ զամենեցուն զգայութիւն² խելացն:

30 Եւ բարձեալ վաղվաղակի գրաստուց՝ փոխէին յայլ տեղի յանապատին, հեռի ի տեղւոյն իբրեւ երիւք պարսիկ հրասախաւք. եւ դադարեալ աւուրս եաւթն, վասն քաջ ցածնլոյ իրաց երկիրդին՝ ապա մաքրեցին զոսկերս սրբոցն յանուշահոտ մարմնոցն. զոր եւ պատեալ արժանաւորապէս կտաւաւք՝ թաղէին պատուով անդէն յանապատին զգուշութեամբ. եւ զոսկերսն առեալ բերէին ի շահաստանն եւ աւուրս բազումս ունէին առ ինքեանս ի ծածուկ: 31 Ապա լռելեայն սկսանէին տալ եւ ոմանց յառաքինի³ քրիստոնէից որք ի կարաւանին էին. որք ընդունէին՝ հաշուելով զհետ փրկութեան ոգւոց եւ մարմնոց: 32 Եւ ստիպով յիւրաքանչիւր աշխարհ⁴ տային հասուցանել վաղվաղակի, յաւգուտ երկնաւոր կենդանութեան ընտանեաց միանգամայն եւ գաւառին: 33 Բայց զառաջին պտուղ աստուածաշնորհ մեծի գանձուն՝ բերեալ նախ երանելոյ հուժկին մատուցաներ կապելոց նախարարացն Յայոց. որք իբրեւ արժանի եղեալք ընդունէին զայնպիսի փրկութեան իւրեանց զգիտն⁵ անդէն եւ անդ ճանաչէին, թէ այցելութեամբ այց առնէ նոցա Աստուած, եւ երբ եւ է արձակին ի կապանացն, բարեխաւսութեամբ ոսկերաց սրբոցն, ըստ բանի սրբոյ առն Աստուծոյ Ղեւոնդի, զոր ի խրատելն իւրում ի գիշերին անետաւորեաց զդիպելոց նոցա ի շնորհէն Աստուծոյ, տեսանել զաշխարհի իւրեանց. որք կատարելոցն էին ասացեալք սրբոյն ի ժամու իւրում:

34 Սկսեալ այնուհետեւ մի ըստ միոջէ պատմել կապելոց նախարարացն Յայոց երանելի այրն Աստուծոյ հուժիկն, զոր անուանել յայսմ հետէ հուժիկ՝ ծանրանամ, եւ զանուն սքանչելոյն ոչ ոք հոգացեալ պատմեաց մեզ, այլ ամենագետն գրեալ պահէ յար մեծ այցելութեանն եւ պարզելէ առատապէս զվարձս վաստակոց⁶ նորա ընդ հաճոյս անուան իւրոյ: 35 Ասեր եւ ոչ լռեր զխնաման մեծամեծս եւ զաւգնութիւն հզարին զոր արարեալ էր նմա. եւ թէ ո՛րպէս ի Վարդգէս յայտնեալ Զրիստոսի զխորհուրդ թագաւորին ծանոյց

1 Ձ. որպէս եւ նշմարեալ *երիր

2 Ձ. զգայութիւն

3 ՏՏ. առաքինի

4 ՏՏ. աշխարհս

5 ՏՏ. զիւրեանց զգիտն

6 Գտ. վաստակաց